ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2019 թվականի N 62 – Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի ապրիլի 2-ի N 11-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2019 թվականի մայիսի 10-ին ներկայացված N 5 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից Հայրենական մեծ պատերազմի 24 /քսանչորս/ մասնակիցների սոցիալական աջակցության նպատակով, հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 1 200 000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Գևորգյանին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

2019թ. մայիսի 10
ք.Իջևան